ԳԼՈՒԽ ԺԲ.

Պատրիարքութիւն Պօղոսի, կենսագրութիւն նորին։ Ապու Տահայ։ Կատարած Յոպպէի։ Սաւ։ Մահ Պօղոսի։ Ընտրութիւն Յովակիմ վարդապետի։ Վէճ ընդ Լատինաց վասն գերեզմնատան որ 'ի Սիոն։

ԶԿենի վախճանի Կարապետ Եպիսկոպոսի Գանձակեցւոյ, ընտրեցաւ 'ի նմին ամի յԱթոռ Պատրիարքութեան Երուսաղէմի Պօղոս Եպիսկոպոս Վանցին, մին 'ի գլխաւոր միաբանաց Աթոռոյն, և հաստատեցաւ իշխանութիւն նորա Արքունի հրովարտակաւ · ՌՌՍ (1768) 'ի 12 Ապրիլի · Ժամանակ նեղութեան և չարչարանաց Յոպպէոյ առ Ապու Տահայիւ և Ալի Պէկիւ։

Զկենսագրութիւն Պօղոսի քաղեմք 'ի ձեռագրէ, զոր ինքն գրեալէ։ Սա էր 'ի Վասպուրական աշխարհէ և 'ի քաղաքէն Վանայ, անուն հօրն Մարգարա, և մօրն Փերուզայ· 'ի 6 ամեայ հասակին մեռաւ մայրն։ Եւ Հայր նորին եկեալ էր յԵրուսաղէմ յաւուրս Շղթայակրի եւ յարեալ 'ի սէր տնօրինական Ս· Տեղեաց, և ապա դարձեալ յաշխարհ իւր, և յետ ամաց ինչ եկն յԵրուսաղէմ ընդ բազմութեան ուխտաւորաց, եւ 'ի ճանապարհին ընկղմեցան բեռինք ուխտաւորաց 'ի գետն Եփրատ և ոմանք վնասեցան իսկ · եւ ապա դիմեալ 'ի Բերիա 'ի Դամասկոս, հասին յԵրուսաղէմ, որք էին ուխտաւորք թուով անձինք իբրեւ 700 · 'ի սոյն կարաւանի էր և Առաջնորդ Ս · Կարապետի Գլակայ վանաց, Աբրահամ Եպիսկոպոս, որ էր եղբօր որդի Գրիգորի Պատրիարքի և աշակերտ նորին, որ և նստաւ յետոյ Կաթուղիկոս Հայոց յԷջմիածին · Պալատցի Յակոբ վարդապետ, և Գաբրիէլ վարդապետ որ եղեւ առաջնորդ Պրուսայու, և այլ երեք վարդապետք · իսկ բազմութիւն ուխտաւորաց զարդարեալ էին 'ի զէնս և 'ի զարդս երիվարաց և հեծելովք, որոց ընկերացաւ և Կուսակալն Դամասկոսի Իսմայիլ Փաշայ՝ թողեալ զգօրս իւր 'ի Նային։ Եւ եղեւ 'ի հասանիլ սոցա յԵրուսաղէմ, Գրիգոր Պատրիարք միջնորդութեամբ Աբրահամ Եպիսկոպոսի հաղիւ ուրեմն զիջաւ